ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1869–1923)

Հովհաննես Թումանյանը հայ բանաստեղծ է, արձակագիր, ազգային և հասարակական գործիչ: Գրել է բանաստեղծություններ, պոեմներ, քառյակներ, բալլադներ, պատմվածքներ, հեքիաթներ, ակնարկներ, քննադատական ու հրապարակախոսական հոդվածներ, կատարել է թարգմանություններ, մշակել է «Սասնա ծռեր» դյուցազնավեպի «Սասունցի Դավիթ» ճյուղը: Նա ամենայն հայոց բանաստեղծն է:

Հ. Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 19-ին Լոռվա Դսեղ գյուղում: Սովորել է Դսեղի ծխական դպրոցում, ապա Ստեփանավանի նորաբաց երկսեռ դպրոցում: 1883 թ. բնակություն է հաստատել Թիֆլիսում: 1883–1887 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, սակայն նյութական ծանր դրության պատճառով 1887 թ. կիսատ թողնելով ուսումը՝ աշխատել է Թիֆլիսի հայկական տարբեր կառույցներում, աշխատակցել է «Աղբյուր», «Մուրճ», «Հասկեր», «Հորիզոն» գրական պարբերականներին:

Թումանյանն իր առաջին ստեղծագործությունը գրել է 12 տարեկանում, երբ սովորում էր դպրոցում:

Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են մի շարք ֆիլմեր, ինչպես նաև ստեղծվել են «Անուշ» և «Ալմաստ» օպերաները:

1922 թ. տարած վիրահատությունից հետո Թումանյանի վիճակը բարվոքվում է, սակայն սեպտեմբերին հիվանդությունը դարձյալ

իրեն զգալ է տալիս: Թումանյանին տեղափոխում են Մոսկվայի հիվանդանոցներից մեկը, սակայն 1923 թվականի մարտի 23-ին 54 տարեկան հասակում Հ. Թումանյանը վախճանվում է:

Թումանյանը հուղարկավորել է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը: